

ISSN 1829 - 1864




2014

հուլիս-սեպտեմբեր քիվ 3 (47)

համահայկական հանդես

VEM Pan-Armenian Journal



ՑԵՂԱՍՊԱՆԱԳԷՏՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ 11-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ*

Յուլիս 16-19, 2014, Ուինիպեգ, Մանիթոբա, Կանադա¹

Մի վայրկեան մտովի պատկերացրէք:

Թուրքիայի Ճշմարտութեան և Հաշտութեան Յանձնաժողովը հանդէս է գալիս աշխարհի և Հայոց ցեղասպանութիւնը վերապրած սերունդների առջև և յայտարարում. «Մենք ներողութիւն ենք խնդրում Թուրքիայի ցեղասպանական գործողութիւնների համար: Մենք ներողութիւն ենք խնդրում հայ երեխաներին թրքական որբանոցներ լեցնելու, նրանց անունները փոխելու համար, նրանց պարտադրելու՝ մոռանալ իրենց ազգութիւնը, կրօնքը, լեզուն: Մենք ներողութիւն ենք խնդրում պատմական Ճշմարտութիւնը խեղաթիւրելու և այն մեր դպրոցներում այդպէս դասաւանդելու համար»:

Ահա, այս խօսուն պատկերն էր որ ինձ երևաց երբ Յանձնակատար Մարի Ուիլսոնը ներկայացնում էր Կանադայի Ճշմարտութեան և Հաշտութեան Յանձնաժողովի զեկոյցը՝ արդիւնք հինգ տարիների ուսումնասիրութեան և քննարկումների: Յանձնաժողովի ներկայացուցիչը ցաւ էր յայտնում և ներողամտութիւն յայցում Կանադայի առաջին բնակիչ հնդկացեղերից՝ հարիւր տարիներից աւելի նրանց դէմ գործադրուած ձուլումի խստաբարոյ և անգիշող քաղաքականութեան համար: Պետութիւնը իր վարած քաղաքականութիւնը ընդունում էր որպէս ցեղասպանական: Ցեղախմբերի երեխաները առևանգուել էին և առանձնացուել Residential Schools կոչուած որբանոցներում: Պարտադրել էին նրանց մոռանալ իրենց անունները, դասանաւքը, լեզուն, ցեղային արանդութիւններն ու պատկանելիութիւնը: Նոր անուն, նոր կրօն, նոր լեզու, նոր կենսաձև, նոր ինքնութիւն:

Հիմա Յանձնաժողովի անդամ Ցեղապետ Ուիլթըն Լիթըլշայլդն էր խօսում և արցունքոտ աչքերով նկարագրում էր իր դժբախտ մանկութիւնը այդ որբանոցներում: Իսկ ես պատկերացնում էի հայ որբերի կրած տառապանքը թրքական որբանոցներում՝ բռնի թրքացման նպատակով ստեղծուած այդ յատուկ հաստատութիւններում: Երևակայութեանս աչքերով տեսնում էի նրանց ամենօրեայ պատիժները՝ չհնազանդուելու, թրքերէնի փոխարէն հայերէն խօսելու, Ալլահի փոխարէն Աստծուն աղօթելու, բարձրաձայն լալու և իրենց մեռած մօրը կանչելու համար: Ցեղապետը խօսում էր տարուած երկարամեայ պայքարի մասին, պայքար՝ որպէսզի Կանադայի թանգարաններում տեղ յատկացուի երկրի բնիկ ցեղերի պատմութեանն ու մշակոյթին: Իսկ ես մտածում էի Արևմտահայաստանում հայ մշակոյթի կոթողների փձացման մասին և դրանց բեկորները, որպէս Թուրքիայի դարաւոր մշակոյթի մնացորդաց, ցուցադրելու մասին:

* Ընդունուել է տպագրութեան 12.08.2014:

1 The Eleventh Conference of the International Association of Genocide Scholars. July 16-19, 2014, Winnipeg, Manitoba, Canada.

Ես զառանցանքի մէջ էի: Դա պատահում է ցեղասպանութիւնը վերապրող սերունդներին:

Դայանա Տեր-Յովհաննիսեանը վկայում է այս տարօրինակ զգացման մասին երբ մի գիշեր օտար մի քաղաքում մեքենայ վարելիս փողոցների անունները նրան երևակայական անցելալ էին փոխադրել. Զանինգը՝ Զանկերի, Այլըը՝ Այաշ էր պատկերացրել: Եւ բանաստեղծուհին Սիմանթոյի, Ռուբէն Սևակի, Յօրայայի և միւս հայ մտադրականների հետ է, 1915-ի Ապրիլի 24-ին Պոլսում ձերբակալուած ու Այաշի բանտում կամ Զանկերիի ճանապարհին մոթթուած:

Ֆակտը Կարապետը Հարթֆլդդում որպես թղթակից Urban Renewal Federation of America-ի (URFA) համագումարին էր ներկայացել, բայց մասնակիցների կրծքերին փակցուած URFA վերտառութիւնը կրող նշանները նրան 1915-ի Ուրֆայի հերոսաւարտ էին փոխադրել և նա URFA-ի նախագահութեան զեկոյցի փոխարէն թուրք զօրքի ղէմ հայ բնակչութեան միջև վերջին շունչ հերոսական պայքարի ու տխուր վախճանի պատմութիւնն էր լսում:

Մա մեր նախնիների ստուերն է, որ հետևում է մեզ, որ արդարութիւն է պահանջում:

Մինչդեռ՝ ես մասնակցում էի Ցեղասպանագետների Միջազգային Ընկերակցության (International Association of Genocide Scholars) 11-րդ համագումարին, որ այս տարի Մանիթոբայի համալսարանում կայացավ՝ յատկապես Ուինիպեգի Մարդկային Իրաւանց շուտով բացուելիք արդէն աշխարհահռչակ դարձած Թանգարանի և Կանադայի Ճշմարտութեան և Հաշտութեան Ցանձնաժողովի վերջնական գեկույցի հրապարակման առիթով:

Համագումարի նիստերում և զեկոյցների քանակի տեսակետից հասկանալիորեն յատուկ ճիգ էր թափուած ընդգրկելու Ամերիկաների բնիկ ցեղերի դէմ իրագործուած գաղութարարական և ցեղասպանական քաղաքականութեանց ուսումնասիրութիւններ: Այդու և համագումարը իրաւամբ խորագրուած էր՝ «Ժամանակ, Շարժում և Տարածութիւն. Ցեղասպանագիտութիւնը և Բնիկ Ժողովուրդները» (Time, Movement, and Space: Genocide Studies and Indigenous Peoples): Համագումարի մասնակիցների համար նախատեսուած էր նաեւ այցելութիւն Ուինիպեգից մէկուկէս ժամ հեռավորութեան վրայ գտնուող Սագքինգի Անիշի նաաբէ ցեղախմբին, որի անդամները տաքուկ ընդունելութեամբ հիւրընկալեցին այցելուներին և յատուկ ծրագրով ներկայացրին իրենց պատմութիւնը, աւանդութիւնները, կրած խտրականութիւններն ու ներկայ պայքարը:

Այս տարիի լրանում է նաև Ռուսնոյայի ցեղասպանութեան քսանամեակը, որ համագումարի լիագումար նիստերից մէկում նշուեց պատշաճ և խիստ տպավորի յայտագրով: Թութի դասախօսի ելոյթի ընդմիջից հնչում էր Ռուսնոյայի վերապրողների համար կարգախօսք դարձած վարքագիծը՝ **The 3Rs-Remember, Reunite, Renew** (**Յիշել, Վերամիանալ, Վերանորոգել**): Ինչպէս կարող էի չմտածել ցեղասպանութեան զոհ դարձած ու այժմ պայքարի ոգով նպատակաուղղուած հայ ժողովրդի **3Rs-ի** մասին՝ **Recognition, Retribution, Restoration** (Ճանաչում, Վնասից հատուցում, Հողերի վերականգնում): Համեմատութիւնս ցնցեց ինձ: Որքան դժուարին ու խոչընդոտներով լի է մեր ճամբան:

Մարդկային հրաւանց Թանգարանը, որին մի քանիսս հրախիրուեցինք այցելելու և որի մասին լայն բացատրութիւն տրուեց լիագումար նիստերից մէկում, իր ճարտարապետական իմաստային լուծումներով, բնոյթով և բովանդակութեամբ իրապէս եզակի տեղ պիտի գրաւի աշխարհում: 350 միլիոն դոլար բուտճէով, 23 յարկի հաւասար բարձրութեամբ և 4700 քմ տարածութեամբ այս հսկայ շինութիւնը բնականաբար պիտի ընդգծի Կանադայի անցած ճամբան՝ ներառնելով երկրի բնիկ ցեղախմբերի պատմութիւնն ու մշակոյթը. պիտի պարփակի տնական ցուցադրութիւններ պատմական այն հինգ ցեղասպանութիւնների մասին, որոնք պաշտօնապէս ծանաչել է Կանադան: Դրանց մէջ է նաև Հայոց Ցեղասպանութիւնը,

որի առիթով համագործակցութիւն գոյութիւն ունի Երևանի Հայոց Ցեղասպանութեան Թանգարանի հետ և որի տնօրէն Դոքտ. Հայկ Դէմոյեանը ներկայ պիտի լինի Սեպտեմբերին կայանալիք հանդիսարար բացմանը: Թանգարանում տեղ են գտնելու հարիւրաւոր առժամեայ ցուցահանդէսներ: Ծրագրուած է ունենալ յատուկ ուսուցումներ և յայտագրեր բոլոր տարիքների աշակերտների և ուսումնասիրութիւնների սիւսեր և յարմարութիւն ուսանողների համար: Հնդհանոր նշանաբանը պիտի լինի կոտորել լռութիւնը և խօսել ցեղասպանութիւն կրած, մարդկային իրաւանց կոպիտ խախտման ենթարկուած ժողովուրդների ձայնով:

Համագումարի քառասունից աւելի նիստերին, շուրջ 200 մասնակիցների զեկոյցներում և լիագումարների համար յատուկ հրաւիրուած դասախօսների ելոյթներում ներկայացուած հրէական Ողջակիզման, Բոզնիայի, Ռուանդայի և ամերիկացի հնդիկների, քրդերի և այլ ցեղասպանութիւնների մասին նորովի և բազմակողմանի ուսումնասիրութիւններում մէջ ընդ մէջ յիշում էր Հայոց Ցեղասպանութիւնը որպէս նախադէպ, որպէս ձևաչափ, կամ հէնց պարզ համեմատութիւն: Հայոց Ցեղասպանութիւնը գլխաւոր թեման էր միայն երկու՝ Սուրէն Մանուկեանի և իմ զեկոյցների մէջ, սակայն և հպանցիկ ակնարկ և շօշափուած յղացքների համեմատական եզր Վահրամ Այվազեանի զեկոյցում, ուրեմն և համեմատ նախորդ համագումարներին խիստ անբաւարար:

Հայոց Ցեղասպանութեան Թանգարանի տնօրէնի տեղակալ Սուրէն Մանուկեանի զեկոյցը կրում էր **“Newcomers and Indigenous: Homogenization of Armenian Homeland as Nation and State Building Project in the Late Ottoman Empire”** խորագիրը: Մօտաւոր թարգմանութեամբ՝ «Նորեկներ և բնիկներ՝ հայ ժողովրդի հայրենիքի մաքրագործումը իր բնիկներից, որ ծառայեց թուրք ազգութեան և թուրք պետութեան կազմաւորման գործընթացին»: Մանուկեանը շեշտեց, թէ մաքրագործման գործընթացը աւելի արագացաւ Երիտ. Թուրքերի Բալքաններում կրած պարտութիւնից յետոյ. իսկ այդտեղից գաղթած թուրքերը իրենց հետ բերեցին հայերին ջարդելու վրէժխնդրութիւն, ախորժակ և պատրաստակամութիւն:

Հաւատարիմ մնալու համար համագումարի ընդհանուր թէմային, իմ զեկոյցը տեղահանուած ժողովուրդների համաշխարհային հարցին էր վերաբերում, **“The Plight of Armenian Genocide Survivors within the Context of the Global Issue of Uprootedness”** խորագրով: Ցատակ է, որ շեշտս հայ ժողովրդի փորձառութեան վրայ էր՝ քսաներորդ դարի առաջին կազմակերպուած տեղահանութեան: Հայոց Ցեղասպանութեան մնացորդացը, որ կարողացաւ փախուստ տալ երկրից, ցրուեց աշխարհով մէկ, ապրեց որպէս գաղթական, օտարական, փախստական: Այդ իրավիճակում նրա մէջ զարգացաւ մի հաւաքական հոգեբանութիւն, որ փոխանցուեց սերնդէ սերունդ՝ անկախ ժամանակի և տարածութեան հեռաւորութիւնից: Այդ հոգեվիճակի յատկանիշներից էին և շարունակում են մնալ ինքնութեան շփոթ, Հին Աշխարհին տաճած պատկանելիութեան զգացում, մշտատև ստորոգոյթիւն, յոյս արդարութեան և վերադարձի, սարսափելի կոտորածների, ինչպէս նաև կոյրցած հայրենիքի չմոռացուող յիշատակներ, նոյնիսկ ժխտում Աստծու և կրօնի կամ բողոք Աստծու դէմ: Իսկ այդ հոգեբանական յատկանիշները են կարողացել էի տեսնել տեղահան եղած այլ ազգերի գրականութեան մէջ ցոլացած: Գրականութեան մէջ, որովհետև ես չեմ խօսում փաստաթղթերի պաշտօնական հաստատումների ու թուերի լեզուով, այլ պեղում եմ տեղահանուած ժողովուրդների մէջ զեղարուեստական արտայայտութիւն գտած ցաւը, կարօտը, իղձերն ու երագները:

Հաւատում եմ, որ ինչպէս Շրի Լանքայից տեղահանուած Սուդհարշանա Քումարասամին է գրում, «գրելը մի տեսակ ինքնաձանաչման գործընթաց է, որ ցաւը բանաստեղծութեան է վերածում»². կամ ինչպէս Լևոն Զաւէն Սիւրմելեանն էր գրել,

2 Սուդհարշանա Քումարասամի, “Stormy Seas we have Braved,” հրատարակուած Stormy Seas We Brave: Creative Expressions by Uprooted People ժողովածուի մէջ, խմբ.՝ Հելէն Սուսա, (Geneva: Word Council of Churches, 1998), էջ 49:

«բանաստեղծութիւնը գուցէ կարողանայ բուժել իմ երկձեղքուած ու անյոյս ինքնութիւնը և նորից ինձ մի ամբողջութիւն դարձնել»³: Շրի Լանքայից, Սուդանից, Եթովպիայից, Բոզնիայից, Էդիթիէից, Ուգանդայից, Քիրիբատիից և այլուր տեղահանուած և գաղթական ընկածների և սփիւռքահայոց գեղարուեստական արտայայտութիւնների համեմատական ուսումնասիրութեան արդիւնքում, զատելով ընդհանրական թեմաները, եզրակացրի, որ աւելի քան ամէն ինչ աշխարհի տեղահանուած ժողովուրդներին պէտք է արդարութիւն, որին պիտի յաջորդի հաշտութիւնը անցեալի հետ, և ապաքինում. իսկ դրա համար *sine qua non* պայմանն է՝ ոճրագործը պիտի ընդունի և յանձն առնի իր գործած ոճրի պատասխանատւութիւնը:

Հայկական ներկայացուցչութիւնը այս տարուայ համագումարում անհամեմատելիորէն նուազած էր: Յուսամ, որ հայ ցեղասպանագէտները պատրաստուում են մասնակցելու Ցեղասպանագէտների Միջազգային Հնկերակցութեան յաջորդ տարուայ համագումարին, որ Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակի առիթով տեղի պիտի ունենայ Ցուլիս ամսին Երևանում: Յուսամ, որ պիտի կարողանանք մասնակցող 200-300 ցեղասպանագէտներին տպաւորել մեր խորիմաստ և նորութիւն բերող զեկոյցներով, նման մեծ և բարձրամակարդակ համագումար կազմակերպելու կարողութեամբ, մեր երկրի բնական գեղեցկութեամբ, մեր ժողովրդի բարեհամբոյր կեցուածքով ու հիւրընկալութեամբ, և մանաւանդ՝ մեր դատի արդարութեամբ:

Դոկտ. Ռուբինա Բ. Փիրումեան

11th MEETING OF THE INTERNATIONAL ASSOCIATION OF GENOCIDE SCHOLARS

July 16-19, 2014, Winnipeg, Manitoba, Canada

Rubina B. Perroomian
Ph. D., Los Angeles

11-й СИМПОЗИУМ МЕЖДУНАРОДНОЙ АССОЦИАЦИИ СПЕЦИАЛИСТОВ ПО ГЕНОЦИДУ

16-19 июля, 2014, Виннипег, Манитоба, Канада

Доктор Рубина Б. Пирумян
Лос Анджелес

3 Լևոն Զաւէն Սիւրմեան, "Sombrero," վերահրատարակուած *Forgotten Bread* ժողովածուի մէջ, լսմբ.՝ Դէյվիդ Խերդեան (Berkeley: Heyday Books, 2007), էջ 60: